ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ (ԷԱՃ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 13-ը նոյեմբերի 2018թ.
Ժամը 11[00]

Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի կողմից հայտերի բացումն իրականացվել է 09.11.2018թ., ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 12.11.2018թ.: Աճուրդի ամփոփման արդյունքները ներառված են սույն արձանագրության մեջ:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության մթերքի պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

Հանձնաժողովն արձանագրեց աճուրդի արդյունքների ամփոփման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված դիմում-հայտարարություններն ուսումնասիրելուց հետո:
15.11.2018թ., ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.eauction.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 Ըստ **www.eauction.armeps.am** կայքի տվյալների՝ ՀՀ ՊՆ կարիքների համար **«Սննդամթերքի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

1.	«ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ
2.	«Էրիզ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Գրիգորյան)

2.1 **Eauction** համակարգի կողմից չմերժված 1-ին չափաբաժնով «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող (նախատեսված) **դիմում-հայտարարությունն** առկա է:

2.2 «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունը** համապատասխանում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

(Ա. Գրիգորյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացվել են մասնակիցների ***նախնական*** և ***վերջնական*** գնային առաջարկները.

Հ/Հ	Գնման առարկան	Չափման միավոր	Քանակ	Նախահաշվային գին /ՀՀ դրամ/	Ընկերություն	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/		
						Արժեք	ԱԱՀ	Գին
1	ճարպ խոզի	կիլոգրամ	43 080	70 435 800	«ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ	78 980 000	20%	94 776 000
					«Էրիզ» ՍՊԸ	75 390 000	20%	90 468 000
2	ձուկ՝ սառեցրած	կիլոգրամ	464 375	497 810 000	«Էրիզ» ՍՊԸ	599 817 708.33	20%	719 781 249.99

Հ/Հ	Գնման առարկան	Չափման միավոր	Քանակ	Նախահաշվային գին /ՀՀ դրամ/	Ընկերություն	Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			1-ին տեղ զբաղեցնող մասնակից
						Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ճարպ խոզի	կգ	43 080	70 435 800	«ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ	58 696 500	20%	70 435 800	«ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ
					«Էրիզ» ՍՊԸ	75 390 000	20%	90 468 000 Մերժված, ոչ շահավետ առաջարկ	
2	ձուկ՝ սառեցրած	կգ	464 375	497 810 000	«Էրիզ» ՍՊԸ	599 817 708.33	20%	719 781 249.99 Մերժված, ոչ շահավետ առաջարկ	Չկայացած

3.2 Հանձնաժողովը որոշեց՝ 2-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Գրիգորյան)

4.1 Հիմք ընդունելով **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացված ***նախնական*** և ***վերջնական*** գնային առաջարկները, ինչպես նաև համակարգի կողմից չմերժված մասնակցի կողմից ներկայացված **դիմում-հայտարարության** գնահատման արդյունքները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:**

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Գրիգորյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Վ. Ասատրյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան